ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1990 թ. մայիսի 10-ին տեղի ունեցավ Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որը ներածական խոսքով բացեց Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

Անցած 1989 թ. ակադեմիական ստորաբաժանումների աշխատանքն անցել է տնտեսական և քաղաքական բարդ պայմաններում, ասաց նա։ Հանրապետության տնտեսական ճգնաժամային իրավիճակը, Արցախի հարցի ծրգծրդումը, Ադրբեջանի կողմից հանրապետության շրջափակումը, աղետի գոտու վերականգնման դանդաղ ամսները, փախսականների սուր հիմնահարցերը չէին կարող չանդրադառնալ գիտական աշխատանքների ընթացքի վրա։ Սակայն, չնայած այս դժվարություններին, հարկավոր է ավելի խորացնել ու ծավալել մեր աշխատանքը։

Անցած տարում ընդհանուր առմամբ ապահովվել են դիտահետազոտական աշխատանքների պլանի կատարումը, հիմնարար ու կիրառական գիտությունների գծով ստացվել են դրական արդյունքներ։ Նվաճումներ կան աստղաֆիզիկայի, մաթեմատիկայի, հասարակական գիտությունների ընագավառում, կարևոր հետազոտություններ են անցկացվել մեխանիկայի, ֆիզիկայի կիրառական հիմնահարցերի, ռադիոֆիզիկայի, էլեկտրոնիկայի ինստիտուտներում և այլուր։ Պրեզիդենտն ընդգծեց, որ անհրաժեշտ է զարգացնել մեր ռեգիոնի առանձնակի սեյսմիկության հետազոտությունները, երկրաշարժերի կանխատեսման աշխատանքները։ Հարկավոր է սերտ համագործակցություն ապահովել սփյուռքի հետ և գիտական հետազոտությունները կողմնորոշել դեպի համաշխարհային նվաճումները։

Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի 1989 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս քարտուղար, ՀԽՍՀ իսկական անդամ Դ. Սեդրակյանը։ Նա նշեց, որ հաշվետու տարում ԳԱ նախագահության և բյուրոյի նիստերում քննարկվել է 200 հարց, գլխավոր ուշադրություն կենտրոնացվել է 3 առաջնային հարցադրումների վրա՝ սեյսմոլոգիա, էկոլոգիա և հասարակագիտություն։ Թեև քննարկվել և ընդունվել են հանրապետության տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման ժամանակավոր քարտեզները, Լենինականի, Սպիտակի և Կիրովականի վերակառուցման և հետագա զարգացման տարածքի ընտրության հարցը, ճշտվել է Երևանի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը, այնուամենայնիվ անհանգստություն է պատեհառում հանրապետությունում սեյսմիկ ցանցի ստեղծման գործում հանդես բերվող չարդարացվող դանդաղկոտությունը։ Նշվեց, որ կարևոր հարց է նաև բնակչության նախապատրաստումը երկրաշարժերին։ Այդ գործը գիտական մակարդակով կազմակերպելու համար հարկ է ընդօրինակել բոլոր այն երկրների փորձը, որտեղ այն բարձր հիմքերի վրա է դրված։ Կարևորը և հիմնականն այն է, որ այդ նպատակով տարվող աշխատանքները կոորդինացվեն, իսկ հատկացված ոչ մեծ միջոցները ծախսվեն ռացիոնալ և արդյունավետ։

Ակադեմիայի նախագահության աշխատանքներում տեղ են գտել դրական թերություններ ու բացթողումներ։ Գիտության բաժանումը ակադեմիականի, ճյուղայինի և բուհականի ըստ վարձատրության կատեգորիաների, գիտության կազմակերպման հնացած շատ այլ սկզբունքներ կաշկանդում են նրա զարգացումը։ Զգձրգվում է ԳԱ Լենինականի գիտական կենտրոնի ստեղծումը, վերանայված չէ գիտական խորհուրդների ցանցը, մտահոգության տեղիք է տալիս ներդրվող գյուտերի թվի նվազումը։ Այդ ամենը ստիպում է մտածել գիտությունը նորովի կազմակերպելու անհրաժեշտության մասին։

Այնուհետև գիտական զեկուցումներով հանդես եկան ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ռ. Վարշամովը, Ս. Գրիգորյանը, Դ. Սեդրակյանը։

Տեղի ունեցավ Հայկական ԽՍՀ ԳԱ պարգևների հանձնում։ «Մեծարման գրով» պարգևատրվեցին Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Ղարիբյանը և Գ. Ջահուկյանը, «Վաստակագիր» ստացան ակադեմիայի թղթակից անդամներ Ռ. Ստամբոլցյանը, Ս. Արևշատյանը, գիտության դոկտորներ Է. Վարդանյանը, Մ. Զադոյանը, Գ. Ապրիկյանը, Մ. Սաթյանը։ «Գո-

վեստագիր» հանձնվեց մի խումբ գիտնականների։

* * *

Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի բաժանմունքների ժողովներում մայիսի 7-ին և 8-ին քննարկվեցին անցած մեկ տարում նրանց գործունեության արդյունքները։ Զեկուցումներով հանդես եկան բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարները։

Պատմության և տնտեսագիտության բաժանմունքի 1989 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Առաքելյանը։ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտը հաշվետու տարում ավարտել է Հայկական ԽՍՀ 1991—2010 թթ. գիտատեխնիկական առաջընթացի համալիր ծրագրի կազմումը, հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման կոնցեպցիայի մշակումը երկարաժամկետ հեռանկարի համար։ Համատեղ մշակվել և համաժողովրդական քննարկման համար մամուլում հրապարակվել է Հայկական ԽՍՀ տնտեսական ինքնուրույնության և տնտեսվարկի կոնցեպցիան։

Պատմության ինստիտուտում ուսումնասիրվում են հայ ազատագրական շարժումների, հասարակական հոսանքների, խորհրդային շրջանի պատմության հարցերը։ Ինստիտուտը հրատարակության է պատրաստում հայ ժողովրդի պատմությունը ռուսերեն, լորս հատորով։ Պատրաստված է հայ ժողովրդի ցեղասպանությանը նվիրված փաստաթղթերի երկրորդ հատորը (խմբ.՝ Մ. Ներսիսյան)։

«Հատուկ արտաքին տնտեսական կարգավիճակ՝ Հայկական ԽՍՀ աղետի գոտուն» և «Սփյուռքի էթնո-ազգային կեցության մի քանի հարցեր» թեմաներով զեկուցումներով հանդես եկան տնտեսական գիտությունների դոկտոր Թ. Թորոսյանը և բանասիրական գիտությունների դոկտոր Կ. Դալլաքյանը։ Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն։

Փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի 1989 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բրուտյանը. բաժանմունքի իսկական անդամների և թղթակից անդամների 1989 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին՝ բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի տեղակալ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը։ Բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի տեղակալ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Ջրբաշյանը զեկուցեց փիլիսոփայության, բանասիրության և արվեստի բնագավառում հանրապետության համապատասխան հիմնարկների 1989 թ. հետազոտությունների արդյունքների և կոորդինացման խնդիրների մասին։ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը հանդես եկավ «Հայերենի անհայտ ծագման բառաշերտը» զեկուցմամբ։ «Լևոն Շանթի ստեղծագործության արդիական արժեքը» թեմայով զեկուցում ունեցավ ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Սարինյանը։

Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը Սպիտակի երկրաշարժից հետո մշակել է գիտական նոր ուղղություն՝ աղետի սոցիոլոգիա։ Այս ուղղության հիմնական խնդիրը տարերային ու սոցիալական աղետների ընդհանուր տեսության ստեղծումն է, որը մեծ նշանակություն ունի հատկապես վերականգնման ճիշտ ստրատեգիայի ընտրության համար։ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրապարակել է «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն», «Ժամանակակից հայոց լեզվի բառային ոճաբանություն» մենագրությունները։ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հրատարակել է «Գրական երկի պատմագործառական նշանակությունը» մենագրությունը, արվեստի ինստիտուտի գիտաշխատողների կողմից տպագրության է հանձնվել «Հայ ճարտարապետության պատմության» երրորդ հատորը՝ նվիրված վաղ միջնադարի ճարտարապետական հուշարձաններին ու շինարարական արվեստին և այլն։ Արվեստի ինստիտուտի գիտաշխատողների ջանքերով հրատարակության են պատրաստվել «Հայ ճարտարապետության արցախյան դպրոցը» և «Արցախի կիրառական արվեստը» աշխատությունները։

Է. Գ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ